ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Ծրագիր՝ «Իմ Իրավունքը: Հաջորդ Փուլ: Ներառական կրթություն Հայաստանում և Կոսովոյում»
Վայրը՝ Գյումրի, Շիրակի մարզ, Հայաստան
Սկիզբը՝ Հուլիս 14, 2025
Գործընթաց՝ 2 անիմացիոն կամ էսքիզային կրթական ֆիլմերի նկարահանում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն տեխնիկական առաջադրանքը սահմանում է երկու ուսուցողական ֆիլմերի արտադրության հիմնական պահանջները, որն իրականացվում է Ավստրիական Զարգացման Գործակալության (ADA) և Կարիտաս Ավստրիայի կողմից ֆինանսավորվող «Իմ Իրավունքը: Հաջորդ Փուլ: Ներառական Կրթություն Հայաստանում և Կոսովոյում» ծրագրի շրջանակում:

Ծրագիրը համակարգվում է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի կողմից՝ նպատակ ունենալով աջակցել ներառական, հավասար և որակյալ կրթության զարգացմանը՝ համաձայն Կայուն Զարգացման Նպատակ 4-ի, ՄԱԿ-ի Երեխաների Իրավունքների Կոնվենցիայի (հոդված 28 և 23) և ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող Անձանց Իրավունքների Կոնվենցիայի (հոդված 24) դրույթներին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նկարահանել երկու անիմացիոն կամ էսքիզային ֆիլմ, որոնք նպատակ ունեն ներկայացնել գործնական օրինակներ՝ ցուցադրելով, թե ինչպես կարելի է արդյունավետ կազմակերպել դասապրոցեսը հաշմանդամություն ունեցող երեխաների (ՀՈՒԵ) մասնակցությամբ: Ֆիլմերը նախատեսված են մանկավարժների համար և ծառայելու են որպես գործնական ուղեցույց՝ ներառական ուսումնական միջավայր ստեղծելու նպատակով:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ-Ի ՄԱՍԻՆ

«Հայկական Կարիտաս»-ԲՀԿ-ն հիմնադրվել է 1995 թվականին Հայ Կաթողիկե Եկեղեցու կողմից՝ որպես բարեգործական հասարակական կազմակերպություն: Այն գործում է սոցիալական պաշտպանության, համայնքային զարգացման, կրթության և առողջապահության ոլորտներում՝ աջակցելով խոցելի խմբերին: Գործելով Հայաստանի 125-ից ավելի համայնքներում՝ «Հայկական Կարիտաս»-ը ունի շուրջ 230 աշխատակից:

Կազմակերպության առաքելությունն է սիրով ու հարգանքով ծառայել խոցելի խմբերին՝ պահպանումով նրանց արժանապատվությունը: Տեսլականը՝ լինել կարեւոր դերակատար սոցիալական արդարության և պաշտպանության ոլորտում:

«Հայկական Կարիտաս»-ը անդամակցում է «Կարիտաս Ինտերնացիոնալիս» և «Կարիտաս Եվրոպա» ցանցերին՝ գործելով միջազգային գործընկերների հետ և արձագանքելով տեղական ու գլոբալ խնդիրներին:

Կազմակերպության կենտրոնական գրասենյակը գտնվում է Գյումրիում, իսկ ծրագրերը գործում են Հայաստանի տարբեր մարզերում, ներառյալ Լոռի, Շիրակ, Գեղարքունիք, Արարատ, Սյունիք և Երևան քաղաքը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Մշակվեն սքեչային կամ անիմացիոն ձևաչափով երկու ֆիլմ կողմերի հետ նախնական քննարկման արդյունքում:
- Նկարահանվեն հայերեն լեզվով՝ անգլերեն ենթագրերով:
- Լինեն բարձր որակի (HD), տեխնիկապես և բովանդակորեն ամբողջական՝ հանրային ցուցադրման համար:
- Չգերազանցեն 5 րոպե տևողություն՝ յուրաքանչյուր ֆիլմի համար:
- Ֆիլմերի նկարահանման ողջ գործընթացը՝ ներառյալ նախաարտադրական, արտադրական և հետարտադրական փուլերը, իրականացվելու է ընտրված կազմակերպության կողմից:
- Աշխատանքների իրականացումը կկոորդինացվի «Հայկական Կարիտաս»-ի ծրագրի ղեկավարի և համակարգողի կողմից, և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի /ՀՄԿ/ կողմից նշանակված պատասխանատուի կողմից, ովքեր կտրամադրեն ընթացիկ դիտարկումներ և առաջարկություններ՝ ապահովելու վերջնական արդյունքի համապատասխանությունը ակնկալվող չափանիշներին:
- Արտադրության ընթացքում ընտրված կազմակերպությունը պարտավոր է հետևել Ավստրիական զարգացման գործակալության և «Կարիտաս Ավստրիայի» հաղորդակցության և տեսանելիության ուղեցույցներին:
- Աշխատանքի արդյունքները՝ երկու ֆիլմերը, պետք է փոխանցվեն «Հայկական Կարիտաս»-ին թվային բարձր որակով, ինչպես նաև առնվազն 4 օրինակով DVD սկավառակներով:

Արտադրության փուլերը՝ նախաարտադրություն, արտադրություն, հետարտադրություն՝ կիրականացվեն ընտրված կազմակերպության կողմից՝ «Հայկական

Կարիտաս»-ի անմիջական վերահսկողության և մասնակցությամբ: **Նախագծման**

փուլում ներկայացվում են՝

- Ընտրված կազմակերպությունը պետք է ներկայացնի ֆիլմերի սինոփսիսներն ու սցենարները, որոնք հիմնված կլինեն ձեռնարկում ներառված համանուն պատմությունների վրա: Սցենարները պետք է հաստատվեն «Հայկական Կարիտաս»-ի կողմից: Ֆիլմերը նախատեսվում է պատրաստել սքեչային կամ անիմացիոն ձևաչափով, ինչը կորոշվի քննարկման արդյունքում:
- Սցենարները պետք է հիմնված լինեն «Ինչպես խթանել ներառումը դասարանում: Մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար /https://hmk.am/inchpes-xtanel-nerarumy-dasaranum/» ձեռնարկում ներկայացված պատմությունների վրա: Արտադրական պլան՝ հաստատման ենթակա ՀՄԿ-ի և «Հայկական Կարիտաս»-ի կողմից:

Տեխնիկական պահանջներ՝

- Հաշմանդամություն ունեցող երեխաների մասնակցության ձևաչափը պետք է լիովին համապատասխանի մարդու իրավունքների միջազգային չափանիշներին:
- Ֆիլմերը պետք է ունենան բովանդակային և ոճային գրավչություն՝ համապատասխանելով ծրագրի հաղորդակցության և տեսանելիության չափորոշիչներին (ADA, Caritas Austria):

Վերջնական արտադրանքը տրամադրվում է **4K բարձր որակի տեսաֆայլի ձևաչափով:**:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Կազմակերպությունները պետք է ունենան՝

- Առնվազն 3 տարվա փորձ ֆիլմերի կամ սոցիալական գովազդների ստեղծման ոլորտում:
- Բարձրակարգ տեխնիկական միջոցներ՝ նկարահանման, ձայնագրման և լուսավորման համար:

- Հստակ ժամանակացույցով և արդյունքի վրա կենտրոնացած աշխատանքային մոտեցում:
- Հարցազրույցների կազմակերպման կարողություն հայերեն լեզվով, ենթագրավորման հնարավորություն անգլերենով (առավելություն):
- Աշխատանքային փորձ երեխաների պաշտպանության կամ հաշմանդամության ոլորտում (առավելություն):

ԴԻՄՈՒՄԻ ՓԱԹԵԹ

Հետաքրքրված կազմակերպությունը պետք է ներկայացնի՝

1. Նմանատիպ նախորդ նախագծերի երկու օրինակ (լինքեր կամ ֆայլեր),
2. Օգտագործվելիք տեխնիկական միջոցների ամբողջական ցանկ (տեսախցիկ, լույս, ձայն),
3. Իրականացնող թիմի ինքնակենսագրականները և դերաբաշխում,
4. Գնային առաջարկ՝ ներառյալ աշխատանքային բյուջեն:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ԱՌԱՔՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Պայմանագրի ստորագրումից հետո 5 օրվա ընթացքում ներկայացվում է մանրամասն աշխատանքային պլան:
- Ֆիլմերը լիարժեք պատրաստի տեսքով ներկայացվում են Սեպտեմբեր ամսվա ընթացքում:
- Հայկական Կարիտասի կողմից հաստատվելուց հետո աշխատանքը կհամարվի ընդունված:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳ
Հայտերը պետք է ուղարկել հետևյալ էլ. հասցեներին՝

g.norikyan@caritas.am

z.hovhannisyan@caritas.am

Դիմումների վերջնաժամկետը՝ 15 օգոստոսի, 2025թ.

Նշված ժամկետից ուշ կամ թերի ներկայացված դիմումները չեն դիտարկվի:

Դիմումները կարող են ներկայացվել հայերեն կամ անգլերեն լեզվով: Արդյունքների մասին թեկնածուները կտեղեկացվեն՝ առաջարկների քննարկումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: